

**1.2.8.2. Կազմակերպությունների ակտիվները<sup>1</sup>**

2002թ. ընթացքում հանրապետության ընտրանքային կարգով ընտրված մոտ 1050 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների շրջանառու ակտիվները նվազել են 46806.2 մլն. դրամով կամ 8.6%-ով և 2003թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել՝ 497661.3 մլն. դրամ: Ընդ որում, 2002թ. ընթացքում կարճաժամկետ դեբիտորական պարտքերը նվազել են 51419.2 մլն. դրամով, իսկ ապրանքանյութական պաշարները՝ 5829.6 մլն. դրամով:

**Տնտեսական գործունեության հիմնական ճյուղերի շրջանառու ակտիվների կազմը**

(մլն. դրամ)

	1.01.2002թ. դրությամբ				1.01.2003թ. դրությամբ			
	շրջանառու ակտիվներ	այդ թվում՝			շրջանառու ակտիվներ	այդ թվում՝		
ապրանքանյութական պաշարներ		դրամական միջոցներ	հաշվարկներ և այլ ակտիվներ	ապրանքանյութական պաշարներ		դրամական միջոցներ	հաշվարկներ և այլ ակտիվներ	
<b>Ընդամենը</b>	544467.5	140123.6	21092.0	383251.9	497661.3	134294.0	25939.1	337428.2
<i>որից՝</i>								
արդյունաբերություն	345169.0	113962.5	4674.4	226532.1	302583.8	108578.6	7437.5	186567.7
<i>%-ով ընդամենի</i>								
<i>նկատմամբ</i>	63.4	81.3	22.2	59.1	60.8	80.9	28.7	55.3
շինարարություն	18140.5	5104.4	364.0	12672.1	16588.1	5354.8	414.5	10818.8
<i>%-ով ընդամենի</i>								
<i>նկատմամբ</i>	3.3	3.6	1.7	3.3	3.3	4.0	1.6	3.2
տրանսպորտ	16893.0	3020.8	1590.7	12281.5	14835.3	3498.0	2422.3	8915.0
<i>%-ով ընդամենի</i>								
<i>նկատմամբ</i>	3.1	2.2	7.5	3.2	3.0	2.6	9.3	2.6
փոստ և կապ	30185.9	8734.5	4703.9	16747.5	26201.1	7952.5	5646.9	12601.7
<i>%-ով ընդամենի</i>								
<i>նկատմամբ</i>	5.5	6.2	22.3	4.4	5.3	5.9	21.8	3.7

2003թ. հունվարի 1-ի դրությամբ շրջանառու ակտիվներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել կարճաժամկետ դեբիտորական պարտքերին՝ 64.7%, ապրանքանյութական պաշարները կազմել են 27.0%, իսկ դրամական միջոցների մնացորդը՝ 5.2%:

Միաժամանակ, դրամական միջոցների 12.0%-ը (3108.9 մլն. դրամ) կազմել է դրամարկղի մնացորդը, իսկ ամենամեծ տեսակարար կշիռը՝ 61.1%-ը (15850.0 մլն. դրամ) բաժին է ընկել արտարժույթային հաշվին:

<sup>1</sup> Տվյալների վերլուծությունը կատարվել է ըստ «2-Ֆ» վիճակագրական հաշվետվության ձևի: